

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆԴԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՄԱՎԱՐԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆԴԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

2 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Շ. Դանիելյանի,
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Դովիաննիսյանի, Շ. Նազարյանի, Ո. Պապայանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի,

գործով որպես պարավանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Աշուր Մանուկյանի դիմումի իիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Մանուկյանի՝ 18.12.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուլտագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարախանող կողմերի գրավոր բացաբրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՅԱԿԱՆ ԴՐԱՄ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները» վերբառությամբ 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը սահմանում են.

«1. Եթե առաջին ապյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գլուխ է, որ առաջադրված մեղադրանքը խափացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայք են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չեն կարող հայտնի լինել մինչդադրական վարույթում, եւ եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն փայլս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն։ Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը։

2. Սույն հոդվածի առաջին մասով նախագրեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դադարակի միջնորդությամբ հետաձգում է նիսպը՝ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար։ Նիսպը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամբորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ։

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 309.1-րդ հոդվածը լրացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՏՕ-270-Ն օրենքով։

Նշված օրենքով 309.1-րդ հոդվածի լրացումը պայմանավորվել է ՀՀ սահմանադրական դադարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշմամբ, որով ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչվեցին ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր: Նույն որոշմամբ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչվեցին նաև Հայաստանի Հանրապետության քրեական դադարավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 292-րդ հոդվածի 5-րդ կետի, 297-րդ հոդվածի, 363-րդ հոդվածի 2-րդ մասի, 394-րդ հոդվածի 5-րդ մասի, 398-րդ հոդվածի 6-րդ մասի, 421-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419-րդ հոդվածի 2-րդ կետի՝ լրացուցիչ նախաքննություն նախագրեսող դրույթը:

2. Քննության առարկա գործի դադարավարական նախապարմությունը հանգում է նրան, որ թիվ 62202608 քրեական գործով 2008 թվականի մարտի 4-ին դիմողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով: 2008 թվականի հունիսի 10-ին թիվ 62202608 քրեական գործից անջապվել են դիմողի վերաբերյալ գործի նյութերը, եւ անջապված մասով նախաքննությունը շարունակվել է թիվ 62212308 քրեական գործով: 2008 թվականի հունիսի 13-ի որոշմամբ դիմողը ներզրավվել է որպես մեղադրյալ, եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 1-ին մասով: 2008 թվականի հունիսի 16-ին քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դադարան:

2008 թվականի հուլիսի 29-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դադարանը բավարարել է մեղադրողի նույն օրվա միջնորդությունը՝ անհրաժեշտ քննչական եւ դադարավարական գործողություններ կադարելու եւ դիմողի նկարմամբ նոր մեղադրանք առաջադրելու համար դադարանությունը մեկ ամսով հետաձգելու վերաբերյալ:

2008 թվականի հուլիսի 30-ին դիմոդին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, եւ նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երեւանի քրեական դադարանի, որդեռ գործն ուղարկվել է ըստ առարկայական ընդդադարան, 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դադարավճռով դիմողը ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անպարփ եւ արդարացվել

Ե: Դիմողը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով եւ դպրապարտվել ազատազրկման հինգ փարի ժամկետով:

ՀՀ վերաբննիչ քրեական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 10-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով դիմոնի վերաբերյալ Երեւանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռը:

«**ՎՃՌԱՔԵԼ** դադարանը՝ գիմելով, որ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված է, որ դիմողը կարարել է **ՎՃՌԵԱԿԱՆ օՐԵՆՍԳՐԻ 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախադիսված հանցանքը**, եւ վերաբննիչ դադարանը հանգել է ճիշդ եզրակացության, իր՝ 19.05.2009թ. որոշմամբ վերադարձել է դիմողի պաշտպանի բերած վճռաքել բողոքը:

3. Դիմողը՝ որպես վիճարկվող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հակասահմանադրականության հիմնական փաստարկ, իր դիմումում վկայակոչում է ՀՀ սահմանադրական դադարանի 24.07.2007թ. ՍԴՈ-710 որոշումը, որով Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր են ճանաչվել դադարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինսպիրուտուր կարգավորող նորմերը:

Ըստ դիմողի՝ «Ռեական դարավարության» օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը քողարկված կերպով հնարավորություն են դալիս կիրառել «լրացուցիչ նախաբնության ուղարկելու» ընթացակարգ, ինչը ՀՀ սահմանադրական դարարանի կողմից ճանաչվել է հակասահմանադրական։ Որպես փաստարկ դիմողը ներկայացնում է դարական պրակտիկայից այնպիսի օրինակ, երբ ԵԿԴ/0192/01/09 գործով ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածը կիրառվել է երեք անգամ, որից երկուսի դեպքում գրավոր ակտ չի կայացվել, «...որպեսզի բավարարի պարբռաբանված եւ հիմնավոր լինելու հափորոշիչն»։

Դիմողը գրնում է նաեւ, որ ՀՀ քրեական դարպավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառման դեպքում չի երաշխավորվում անձի՝ իրեն առաջադրված մեղադրանքին ծանոթանալու իրավունքը, քննչական գործողությունների արձանագրությունների պարզեցներին ծանոթանալու իրավունքը, մինչեւ մեղադրանքը դափարան ուղարկելը՝ մեղադրանքի էության վերաբերյալ բացագրություն սպանալու եւ պաշփառան ունենալու իրավունքները, մեղադրանքի վերաբերյալ ցուցմունք փալու իրավունքը, առերեսման եւ ՀՀ քրեական դարպավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այլ իրավունքներ։ Դիմումը գրնում է, որ քրեական

գործով ապացույցներ կարող են սպացվել միայն համապատասխան քննչական գործողություններ եւ դրանցից բխող դադարական գործողություններ կադարելու միջոցով՝ պայմանով, որպեսզի մեղադրյալի համար ապահովվի ՀՀ քրեական դադարական գործության օրենսգրքի 26-րդ գլխի դադարական երաշխիքները: Ըստ դիմողի՝ քրեական դադարական սկզբունքների հետ անհամարեղելի է նախաքննության մարմնի քննչական եւ դադարական գործողությունների կադարումը՝ առանց գործը վարույթ ընդունելու:

Դիմողը վիճարկում է նաև օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քննչական գործողությունների կադարմամբ ձեռք բերված ապացույցների թույլագրելիությունն այն պարզաբանությամբ, որ փվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը դադարանն է, ուստի քննիչն իրավունք չունի կադարելու քննչական գործողություններ: Ըստ դիմողի՝ «դադարական կողմից մեղադրական եզրակացությունը հասպարվելուց եւ դադարան ուղարկելուց հետո վարույթն իրականացնող մարմինը դադարական օրենսգրքով, ըստ էության ոչ մի իրավասություն չունի դադարանի վարույթում գրնվող քրեական գործի շրջանակներում որևէ քննչական գործողություն կադարելու»:

Դիմողը գրնում է նաև, որ «...սույն գործով խնդրահարույց իրավակարգավորման ինսպիրությի բաղկացուցիչ մաս է» նաև վիճահարույց հոդվածի 5-րդ մասը, եւ միջնորդում է համակարգային փոխկապակցության մեջ անդրադառնալ նաև ՀՀ քրեական դադարական գործության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությանը:

4. Դադարականող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գրնում է, որ ՀՀ քրեական դադարական գործության օրենսգրքով սահմանված՝ քրեական գործերի քննության վարույթային կարգը երաշխավորում է դադարական բոլոր փուլերում գործի բացահայտմանն ուղղված անհրաժեշտ գործունեության իրականացում՝ դադարական քննության փուլերում ապացույցների ողջ ծավալի հետազոտման արդյունքում: Դա է պարբեր, որ քր. դադ. օր-ը (հոդված 354) պահանջում է կողմերից դադարական վիճաբանությունների փուլում իրենց ճառերում հիմնվել միայն այնպիսի ապացույցների վրա, որոնք հետազոտվել են դադարական քննության ընթացքում: Բացի այդ՝ քր. դադ. օր-ը ոչ միայն կողմերին օժիք է դադարական քննության փուլում նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքով, այլև գործի հանգամանքները բացահայտելու իրավասությամբ օժիք է նաև դադարանին: Քր. դադ. օր-ի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դադարական կաշկանդված չէ կողմերի կարծիքներով եւ

իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարդությունը բացահայտելու համար: Այս դրույթն ուղղակիորեն պայմանավորված է քրեական դարավարության մրցակցային բնույթով, որի համաձայն՝ դարարանը հանդես չգալով մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այնուամենայնիվ, ներկայացնում է իրավունքի շահը: Ուստի դարական քննության ընթացքում դարավարության կողմերի եւ դարարանի ապացուցողական գործունեության արդյունքում կարող են ի հայր գալ փաստական հանգամանքներ, որոնք հայդին չեն եւ չեն կարող հայդին լինել մինչդարական վարույթում:

Ըստ պարասիստանողի՝ քր. դար. օր-ի 309.1-րդ հոդվածի կարգավորման պարագայում դարարանն այլեւս իրավասու չէ քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության, այլ, հիմնվելով առկա ապացույցների վրա, պեսք է գործը լուծի ըստ էության: Այս ամբողջ ընթացքում գործը շարունակում է մնալ դարարանի վարույթում, եւ դարարանն է սահմանում այն ժամանակահարվածը, որի ընթացքում պեսք է կարարվեն համապատասխան գործողությունները (որպես կանոն՝ մեկ ամիս, իսկ բացառիկ դեպքերում դարարանի որոշմամբ՝ եւս մեկ ամիս):

Պարասիստանողը գիտնում է, որ հիմնավոր չէ նաեւ դիմողի այն պնդումը, որ վիճարկվող իրավակարգավորումը սահմանափակում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Զր. դար. օր-ի 309.1-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորումն սպեհում է ամբաստանյալի իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքներ: Այդ հոդվածը կարգավորում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները: Նա պայմանավորված է նրանով, որ անգամ մեղմացման առումով մեղադրանքը փոփոխելիս, եթե փոփոխվել են փաստական հանգամանքները, եւ արարքը որպես կարգվել է նվազ խիստ պարիժ նախադրեսող հոդվածով, անգամ այս պարագայում մեղադրյալն օգնում է իր պաշտպանությունը պարշաճ ձեւով իրականացնելու հնարավորությունից:

Պարասիստանողի կարծիքով, թեեւ ՀՀ քր. դար. օր-ի 309.1-րդ հոդվածն ամբողջապես նվիրված է դարական քննության ընթացքում մեղադրանքի լրացմանը կամ փոփոխմանը, սակայն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը եւ նույն հոդվածի 5-րդ մասն ուղղված են սկզբունքորեն միմյանցից դարձերվող իրավիճակների կարգավորմանը: Դրանից ենելով՝ պարասիստանողը գիտնում է, որ ՀՀ քր. դար. օր-ի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի իմաստով վիճարկվող իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված չէ, կարգավորում է սկզբունքորեն դարձերվող իրավիճակ եւ սույն գործով վիճարկման առարկա չի կարող լինել:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու վերաբերյալ նախկինում գործող և օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված ներկա օրենսդրական կարգավորման ինսպիրուված ների համադրված վերլուծության արդյունքներով դատարանի մեղադրական թերումից ձերբազարվելու երաշխիքների, դատարանի անկախության և անկողմնակալության, դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների ու երաշխիքների ապահովման սահմանադրափակական գնահապումը:

Սահմանադրական դադարանք՝ իր ՍԴՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինսպիրուտուր կարգավորող նորմերը, արդարադատությունը և ազգային իրավական դիրքորոշումները, որոնք էական նշանակություն ունեն նաև սույն գործի առնչությամբ, եւ որոնք, մասնավորապես, հանգել են հետևյալին.

նախ. Երբ դափարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադափավարական օրենքի էական խախտումներով, փոխանակ ՀՀ քր.դադ.օր-ի 105-րդ հոդվածի հիմքով, որը համահունչ է ՌԱ Սահմանադրության 22-րդ հոդվածին, որպես ապացույց չօգտագործի դրանք եւ մյուս ապացույցների գնահաք-մամբ լուծի գործի ելքը, գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դափարանը նախաքննության մարմնին հնարավորություն է փալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը: Մյուս կողմից, խախտվում է քրեական դափավարության կարեւոր մի սկզբունք, ըստ որի՝ դափարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արդահայդի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր.դադ.օր-ի 23-րդ հոդված), սկզբունք, որը նպագրակառողջված է ՌԱ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախադեսված՝ դափարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դադարքննության այլ երաշխիքների, դադարքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում եւ անկողմնակալ դադարանի կողմից: ՀՀ քր.դադ.օր-ով նախագրեաված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դադարանը դուրս է գալիս դադավարությունում անկողմնակալության սկզբունքի շրջանակներից եւ ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադապության գործառույթի հետ անհամագեղեկի գործողություններ: Դադարանը խախտում է նաև կողմերի միջև հավասարության սկզբունքն ի շահ մեղա-

դրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դադարական եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Երրորդ՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինսպիրությունը կիրառումը պարունակում էր նաև արդար դադարքնության գործերից մեկի՝ դադարքնությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վրանգ, որի պարագայում սահմանադրական դադարանն արձանագրեց, որ դադարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հեգեւանքով անձն անազարդության մեջ կարող է պահվել մեկ գործուց ավելի երկար ժամկետով:

Չորրորդ՝ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարեւոր բաղադրաբարբերից է չփարափված կասկածները հօգութ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կադարումը եւ քրեական գործը դադարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամարեղելի էին միջյանց հետ: Քրեական գործը նախկինում նախադեսված կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում էր նշված հոդվածում ամրագրված՝ չփարափված կասկածները հօգութ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

Վինգերորդ՝ սահմանադրական դադարանը գտել է նաև, որ դադարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամարեղելի է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազարտությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դադարքնության իրավունքի այնպիսի գործերի հետ, ինչպիսիք են դադարքնությունն անկողմնակալ դադարանի կողմից եւ այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները:

Վեցերորդ՝ գործը դադարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ քրեադարավարական օրենսդրությամբ նախադեսված նախկին կարգն անհամարեղելի էր նաև երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կադարվող դադարավական բարեփոխումների դրամաբանության հետ, որոնք ուղղված են դադարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբագագամանը:

Թվարկված իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրական դադարանը նկափի էր ունեցել, որ ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի համակարգային վերափոխումները համահունչ կլինեն սահմանադրական բարեփոխումների

ընդհանուր գրամաբանությանը եւ քրեական գործի դադարքննության հիմքում կդրվի այն ելակեփային սկզբունքի լիարժեք արմադավորումը, ըստ որի, եթք գործն ընդունվել է դադարանի վարույթ, ապա այն պետք է սկզբունքորեն լուծվի դադարքնության արդյունքում մեղադրանքի իրավական գնահատման վերաբերյալ դադարանի վերջնական որոշմամբ:

6. ՇՇ քրեական դադարանության օրենսգործում լրացված 309.1-րդ հոդվածը, որի իրավակարգավորման առարկան առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանների որոշումն է, նախադեսում է դադարանում մեղադրանքի փոփոխման երկու իրավական ռեժիմ՝ մեղադրանքը փոխելը. ա) քննչական եւ այլ դադարական գործողություններ կադարելու եւ բ) առանց լրացուցիչ քննչական եւ այլ դադարական գործողություններ կադարելու միջոցով:

Միաժամանակ, օրենսդիրը մեղադրողի՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դադարական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրացման համար սահմանել է մի շարք պարբադիր նախապայմաններ, որոնք կոչված են երաշխավորելու քրեական դադարանության մասնակիցների իրավունքների եւ ազադությունների պաշտպանությունը եւ որոնք անվերապահորեն պետք է հաշվի առնվեն դադարական պրակտիկայում: Դրանք են՝

ա) եթե ի հայր են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չեն կարող հայտնի լինել մինչդադարական վարույթում,

բ) եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն դալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դադարական քննությունը հետաձգելու,

գ) վերոհիշյալ հիմքերի առկայությունը պետք է գնահատի դադարանը,

դ) նիսպը կարող է հետաձգվել բացառապես անհրաժեշտ քննչական եւ այլ դադարական գործողություններ կադարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար,

ե) նիսպը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, եթք անհրաժեշտ քննչական եւ այլ դադարական գործողություններ կադարելու համար ողջամփորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ,

զ) հետաձգումը չի կարող նպաստակ հետապնդել լրացնելու նախկինում կադարված թերի նախաքննությունը:

Առանց լրացուցիչ քննչական եւ այլ դադարական գործողություններ կադարելու մեղադրանքը փոխելու կազմը սահմանված է օրենսգործի 309.1-րդ հոդվածի 3-րդ

Եւ 5-րդ մասերով, որոնք հոդվածի այլ մասերի հետ կազմում են համակարգային առումով փոխկապակցված ամբողջականություն՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հիմնախնդրի օրենսդրական կարգավորման շրջանակներում: Մասնավորապես, օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Մեղադրողը կարող է մինչեւ դադարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դադարական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբասպանյալը կադարձել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»:

Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Եթե դադարանության ընթացքում պարզվում է, որ ամբասպանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշդ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերադրակելու որոշում չի կայացնում կամ վերադրակելու համար դադարական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դադարանն իր նախաձեռնությամբ մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է դադարական նիստը՝ առաջարկելով գլխավոր դադարանյալին կամ գլխավորին վերահասպանելու մեղադրական եզրակացությունը:

Մեղադրական եզրակացությունը վերահասպանելուց հետո դադարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դադարական ակտ»:

Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի ամբողջական ուսումնասիրությունից բխում է, որ դադարանում մեղադրանքը փոփոխելը կադարձվում է երեք կարգով՝

ա/ մեղադրողի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր), որի դեպքում մեղադրողի միջնորդությամբ նիստը հետաձգվում է անհրաժեշտ քննչական եւ այլ դադարական գործողություններ կադարձվում եւ նոր մեղադրանք առաջադրելու համար՝ առաջադրված մեղադրանքի **թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով**,

բ/ մեղադրողի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մաս), որի դեպքում մեղադրողը կարող է մինչեւ դադարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, **այդ թվում նաև՝ խստացման առումով՝ դադարանության ընթացքում ի հայք եկած հանգամանքների հիման վրա, առանց անհրաժեշտ քննչական եւ այլ լրացուցիչ դադարական գործողություններ կադարձվում եւ նոր մեղադրանք առաջադրելու համար նիստը հետաձգելու,**

գ/ դադարանի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մաս), որի դեպքում դադարանը նիստը մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է՝ առաջարկելով մեղադրողին վերահասպանելու մեղադրական եզրակացությունը, եթե դադարանության ընթացքում պարզվում է, որ ամբասպանյալի արարքի իրա-

Վարանական որակումը ճիշփ չէ, իսկ մեղադրողը **Խստացնելու առումով** արարքը վերադարձելու որոշում չի կայացնում կամ վերադրակելու համար դադարական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում:

Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ քրեական գործի դադարքնության փուլում ի հայր եկած նոր փասբերի հիմքով օբյեկտիվորեն կարող են փոփիսվել գործի հանգամանքների եւ ամբասդանյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը կամ հանցակազմի հավկանիշների բովանդակությունը: Սակայն, բոլոր դեպքերում, էական հանգամանքն այն է, որ գործը շարունակում է գործի դադարքնության փուլում, չի փոխվում ամբասդանյալի իրավական կարգավիճակը, իսկ մրցակցային դադարքության սկզբունքի պահանջներին համապատասխան երաշխավորվում է ամբասդանյալի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքների պաշտպանությունը:

Միաժամանակ, սահմանադրական դադարանն արձանագրում է, որ, ի գարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք անմիջականորեն ուղղված են դադարանում մեղադրանքը փոփիսվելուն, այդպիսի նպագրակով դադարանի նախաձեռնության հնարավոր դրսեւորումն ուղղակիորեն կարող է վերաբերել մեղադրական եզրակացությունը վերահասպարելու վերաբերյալ մեղադրողին առաջարկություն անելուն: Հնդ որում, ի գարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք վերաբերում են մեղադրանքի փոփիսմանը թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով, դադարանի նախաձեռնությունը կարող է վերաբերել մեղադրանքի փոփիսմանը միայն խստացման առումով, այսինքն՝ դադարանը «հուշում է» մեղադրողին կադարել մեղադրանքը **Խստացման** առումով փոփիսվելու համար անհրաժեշտ գործողություններ: Սահմանադրական դադարանը գործում է, որ այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարեւոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դադարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ պեսք է արդարադարձի միայն իրավունքի շահերը (Ռ. դադ. օր-ի 23-րդ հոդված՝ սկզբունք, որը նպագրակառուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախադասկան դադարանի անկախության եւ անկողմնակալության, ինչպես նաև մրցակցային դադարքության եւ կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը):

7. Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի իրավակարգավորման ուղղվածության առնչությամբ սահմանադրական դադարանն արձանագրում է, որ նոր

մեղադրանք առաջադրելու հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում օրենսդիրն ազար է ընդունելու իրավակարգավորման ցանկացած ուղղվածություն: Տվյալ պարագայում սահմանադրական դադարանի խնդիրն է գնահատել, թե արդյոք տվյալ իրավակարգավորման արդյունքում առկա են բավարար երաշխիքներ դադարանին՝ մեղադրական թեքումից ձերբագափելու եւ դադարական քննությունը հետաձգելուց հետո նոր մեղադրանք առաջադրելու փուլում կողմերի դադարական իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:

Վերլուծելով ՀՀ քր. դադ. օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրաբարական բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դադարան արձանագրում է, որ դադարանության շրջանակներում լրացուցիչ ապացույցների ձեռքբերման եւ այլ դադարական գործողությունների կադարմամբ մեղադրանքը փոխելու դեպքում օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն իրավակարգավորման առումով դադարանին մեղադրական թեքումից ձերբագափելու եւ անկողմնակալ արդարադապություն իրականացնելու բավարար երաշխիքներ պարունակում են՝ դրանց սահմանադրաբարական իրենց բովանդակությանը համապատասխան ընկալման ու իրացման պարագաներում, համաձայն որի.

նախ՝ դադարական նիստի հետաձգումը դադարանի հայեցողական լիազորությունն է, իսկ միջնորդությունը՝ մեղադրողի խնդրանքը, որը դադարանը **կարող է** բավարարել միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման, անհրաժեշտ հիմնավորումների ու **մյուս կողմի կարծիքը լսելու արդյունքում:** Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գործնականում ՀՀ քր. դադ. օր-ի 309.1-րդ հոդվածի վիճարկող դրույթները խիստ հազվադեպ են կիրառվում դադարական պրակտիկայում: Վերջին երկու դադարին դադարական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն վերաբերում է քննված քրեական գործերի 0,6-0,7 դրականությամբ:

Երկրորդ՝ յուրաքանչյուր այդպիսի կոնկրետ միջնորդություն քննելիս դադարանը՝ հիմք ընդունելով օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, պետք է գնահատի, թե **տվյալ կոնկրետ քրեական գործով՝**

ա/ մեղադրանքի ծավալի վրա ազդող՝ դադարանում ի հայր եկած հանգամանքները մինչդադարական վարույթում հայտնի են եղել, թե՝ ոչ, եւ, միաժամանակ, դրանք կարող են հայտնի լինել նախաքննության մարմնին, թե՝ ոչ,

բ/ գործի փասբական հանգամանքները հնարավորություն փալիս են, թե ոչ՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու առանց դադարական քննությունը հետաձգելու եւ քննչական գործողություններ կադարելու:

Երրորդ՝ դափարանը պետք է հանգի այն համոզման, որ այդ գործողությունները կափարվում են դափաբննության շրջանակներում՝ առանց ամբասդայալի կարգավիճակի փոփոխության, երաշխավորելով նաև պաշտպանական կողմի դափավարական իրավունքները:

Չորրորդ՝ նկատի առնվի, որ նման կարգով ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել նախկինում առաջադրված մեղադրանքը հասդարելու համար:

« քր. դափ. օր-ի 125-րդ հոդվածը նախադեսում է, որ ապացույցները ձեռք են բերվում հեփաբննության, նախարնության եւ դափական քննության ընթացքում՝ սույն օրենսգրքով նախադեսված քննչական եւ դափական գործողությունների կափարման ճանապարհով։ Միաժամանակ, օրենսգրքի 310-րդ հոդվածը բրեական գործի քննությունը հեփածգելու հիմք է սահմանում նաև դափարանի նախաձեռնությամբ նոր ապացույցներ պահանջելու անհրաժեշտությունը։ Իսկ օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «...Դափարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով եւ իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարգությունը բացահայփելու համար։» Զնայած « քրեական դափավարության օրենսգրքի համակարգային վերափոխումների արդյունքում այս մոդելումները նույնպես կարող են վերանայվել՝ մրցակցային դափավարության սկզբունքի առավել ամբողջական ու լիարժեք արմադրավորման գեսանկյունից, այսուամենայնիվ, գործող իրավակարգավորման շրջանակներում ակնհայք է, որ դափարանը կարող է իրականացնել ցանկացած դափավարական գործողություն ապացույցների ձեռքբերման նպագակով՝ առանց որևէ սահմանափակման։

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն այն մասին, որ՝ «...Դափարանը դափավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հեփազուրման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ։» Նեփեաբար, եթե քրեական գործի դափաբննության ընթացքում ի հայք են եկել նոր հանգամանքներ, ապա դրանց գնահապումը դափարանի պարփականությունն է։

8. Սահմանադրական դափարանը կարեւորում է նաև առկա իրավակարգավորման դիմուլումը Մարդու իրավունքների եւ հիմնարար ազագությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթների գեսանկյունից։ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ք» կետի համաձայն՝ քրեական հանցագործություն կափարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք պետք է ունենա «քավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը

նախապարտասպելու համար»: Այս նկարառումներով Մարդու իրավունքների եվրոպական դադարանի նախադեպային պրակտիկան՝ նաև դադարանում արարքի վերաորակման եւ ամբասդանյալի իրավունքների պաշտպանության առումով, այն է, որ պեսք է երաշխավորվի ամբասդանյալին ներկայացված մեղադրանքի բնույթի եւ հիմքերի վերաբերյալ մանրամասն գեղեկացված լինելու եւ պաշտպանությունը նախապարտասպելու համար բավարար ժամանակ ու հնարավորություն ունենալու իրավունքը (մասնավորապես՝ Մարտեն ընդդեմ Ֆրանսիայի գործով 19.12.2006թ. վճիռը, Mattei v. France, 34034/02):

« Բրեական դադարարության օրենսգրքի՝ սույն գործով քննության առարկա նորմերի իրավակարգավորման շրջանակներում, մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելուց անմիջապես հետո, դադարանը հետաձգում է դադարական նիստը եւ վիճարկվող հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պարախանողին կամ նրանց ներկայացուցիչներին դադարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է փրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբասդանյալին եւ նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»: ՀՀ բրեական դադարարության օրենսգրքի վերոհիշյալ հոդված-ների դրամաբանությունից բխում է նաև, որ դադարքնության բոլոր փոլերում պեսք է երաշխավորված լինեն կողմերի իրավունքների լիարժեք պաշտպանությունն ու դադարքնության մրցակցային սկզբունքի ամբողջական իրացումը:

9. Ի՞նչն է խանգարել իրավակիրառական պրակտիկան այս պահանջների շրջանակներում իրականացնելուն, եւ ինչո՞ւ է գրեղ գրել ընդհուպ այնպիսի փաստ, եթք նույն գործով, առանց մեղադրողի հիմնավորված գրավոր միջնորդության, դադարանի կողմից վեց ամսվա ընթացքում երեք անգամ մեկական ամսով հետաձգվում է բրեական գործով դադարքնությունը՝ վերջում ամբասդանյալին ճանաչելով անմեղ եւ դադարանով արդարացված (քր. գործ ԵԿԴ/0192/01/09):

Սահմանադրական դադարանը գրնում է, որ դրա պարագաները հիմնականում հանգում են հետեւյալներին.

նախ՝ ՀՀ բրեական դադարարության օրենսգրքի համակարգային անկարպարությունը, դրա շարունակական փոփոխությունների ընթացքում իրավակարգավորման նախակին սկզբունքները մասամբ պահպանելու հանգամանքը: Վերջինս իր դրսեվորումն է գրեղ նաև քննության առարկային առնչվող օրենսդրական լրացումն իրականացնելիս: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի 02 նոյեմբերի 2007թ. նիստի թիվ 23 սղագրության ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ բրեական դադարարության

օրենսգրքում 309.1-րդ հոդվածի լրացումը կափարվել է որպես համակարգային մի ամբողջականություն, որի շրջանակներում է հիմնավորվել նաև հոդվածի 5-րդ մասի անհրաժեշտությունը: Սակայն ներկայացված հիմնավորումների վերլուծությունը վկայում է, որ լիարժեք չի ապահովվել հիմնախնդրի համակարգային կարգավորումը, մասնավորապես՝ հաշվի չեն առնվել սահմանադրական դադարանի ՍԴՈ-710 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները: Ընդ որում, «Իրավական ակդերի մասին» ՇՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանի որոշումներին»: Վերջիններս իմաստ ու բովանդակություն են սրբազնություն և չպետք է աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով դադարանի իրավական դիրքորոշումները: Այս մոդելումը պետք է հաշվի առնվի ոչ միայն իրավասկեդ գործունեության ընթացքում, այլև իրավակիրառական պրակտիկայում:

Երկրորդ՝ այդ մասով օրենսդրական լրացման ընդհանուր գրամաբանության մեջ նկարելի է դադարանի՝ մեղադրական գործառույթից ձերբազարփած չինելու հանգամանքը: Վերջինս չի բխում մրցակցային դադարանության եվրոպական արդի զարգացումների հիմնական միբումներից: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն իր՝ 2010թ. մարտի 12-13-ի 82-րդ լիազումար նիստում հասդարեց «Դադարական համակարգի անկախության մասին» չափորոշիչները, որում հագուստ շեշտվում է, որ դադարական իշխանության անկախությունը չի կարող դիմարկվել միայն գույք իշխանությունների գործառնությունների վեսանկյունից: Այդ անկախությունն առաջին հերթին միջոց ու հնարավորություն է մարդու իրավունքների ու ազագությունների երաշխավորման համար, որը եւ հանդիսանում է դադարական իշխանության հիմնական առաքելությունը: Այս գրամաբանությանն ամենեւին համահունչ չէ օրենսդրական այն դրույթը, համաձայն որի՝ դադարական մեղադրողի վերադասի կարծիքը լրացուցիչ ճշգրելուց հետո միայն կարող է իրավունքի պաշտպանություն երաշխավորել: Այն չի բխում նաև 1985թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Դադարական մարմինների անկախության հիմնական սկզբունքների պահանջներից:

Երրորդ՝ ՇՀ քրեական դադարանության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի համաձայն. «Մեղադրողը կարող է մինչեւ դադարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խսդացման առումով, եթե դադարական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբասդանյալը կափարել է այլ

հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»: Տիշյալ դրույթը գրեթե նույնությամբ ամրագրված է մի շարք այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում (Էսպոնիա՝ հոդվ. 215, Լեհասփան՝ 398, Հարվիա՝ 461-462, Սերբիա՝ 341, Ռուսաստան՝ 277, Ղազախսփան՝ 320, Մոլդովա՝ 326, Բուլղարիա՝ 287 եւ այլն): Սակայն որն է էական դարբերությունը Հայասփանի համեմադությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է դատավարության կողմերի, մասնավորապես՝ դատախազության սահմանադրահրավակական կարգավիճակի առանձնահատկությանը: Այս երկրներում դատախազությունը ոչ միայն հարուցում, այլև իրականացնում է քրեական հետապնդում: Հայասփանի Հանրապետության դատախազությանը, որը ՀՀ Սահմանադրության վեցերորդ գլխում ներկայացված է որպես դատական իշխանության մարմին, քրեական գործի նախաքննության փուլում վերապահելով միայն վերահսկողական գործառույթ գործադիր իշխանության ինսպիրուվների քննություն իրականացնելու գործառույթի նկարմամբ, նույն կարգավիճակի մեջ է դրվել նաև դատաքննության փուլում: Դրանից բխեցվում է, որ եթե նոր ի հայր եկած հանգամանքների հիմքով պետք է քննչական եւ այլ բնույթի գործողություններ իրականացվեն, ապա ամրասփանյալը կրկին պետք է հայտնվի մեղադրյալի կարգավիճակում, որպեսզի համարժեք գործողությունների դեպքում ի վիճակի լինի պաշտպանել իր իրավունքները: Սակայն օրենսդրությունը կարգավիճակի նման փոփոխության ինսփիրուտ չի նախադրեալ, եւ դա նաև կհակասեր սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը: Վրյունքում՝ քողարկված ձեւով գործադրվում է գործը լրացուցիչ քննության վերադարձնելու պրակտիկան, որը չի բխում նաև ՀՀ քր. դադ. օր-ի վիճարկող նորմերի դրույթներից, սակայն հարուցել է դիմողի ներկայացուցիչների արդարացի դժգոհությունը: Ուստի սահմանադրական դատարանը վիճարկող հոդվածի սահմանադրականությունը գնահատում է դրանում բովանդակվող բոլոր մասերի համակարգային ամբողջականության մեջ՝ նաև դրանից բխող իրավական հետեւանքների առումով:

Սահմանադրական դատարանը գիտում է, որ խնդրի լուծումը պայմանավորված է առկա նորմերի ճիշդ կիրառմամբ եւ առաջադրված մեղադրանքը դատաքննության փուլում փոփոխելու ինսփիրուտի համակարգային ամբողջականության ապահովմամբ: Մասնավորապես, մեղադրողն իր սահմանադրական իրավասությամբ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթը պետք է իրականացնի ամբողջական ու արդյունավետ՝ երաշխավորելով դատական քննության շրջանակներում գործի վերջնական հանգուցալուծումը:

Չորրորդ՝ դիմողն իր իրավունքների խախտումը դիմումում է իրավակիրառական պրակտիկայի համարեքսպում: Մասնավորապես ընդգծում է, որ դադարիստական միջնորդության հիման վրա դադարանը գործի դադարքնությունը հետաձգել է 29.07.2008 թվականին՝ մեկ ամսով, մինչդեռ մեկ օր հետո՝ 30.07.2008 թվականին դադարիստական որոշում է կայացրել մեղադրանքը փոխելու մասին: Նույն օրը փոփոխված մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դադարան: **Այդ ընթացքում ոչ մի քննչական գործողություն չի կադարձել:** Այն քննչական գործողությունները, որոնց հիման վրա սպացվել են ապացույցներ եւ որոնց վրա է հիմնվել նոր մեղադրանքը, այն է՝ զեկուցագիր, հարցաքննություն, լուսանկարով ճանաչման գործողություն, արդեն իսկ կադարձել էին մի քանի օր առաջ՝ 26.07.2008 թվականին:

Սահմանադրական դադարանի իրավասության հարցը չէ օրենքի նորմի կիրառման հետ կապված վեճի քննությունը: **«Սահմանադրության 92-րդ հոդվածով Վճռաբեկ դադարանին է վերապահված ապահովել օրենքի միագեսակ կիրառությունը: Վճռաբեկ դադարանը 2009թ. դեկտեմբերի 18-ի՝ Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ ՀՅՇԾՐԴ/0144/01/09 գործով նախադեպային իր որոշմամբ փորձել է քննության առարկայի շրջանակներում ապահովել օրենքի միագեսակ կիրառությունը եւ բացառել դադարական պրակտիկայում քողարկված ձեւով գործը լրացուցիչ քննության ուղարկելու ինսպիրուտիվի կիրառումը: Մասնավորապես, վճռաբեկ դադարանն իրավական դիրքորոշում է արդահայքել այն մասին, որ «**Քրեական դադարական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով նախադեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետեւանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման ռեպրում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հարկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միեւնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընդունելիության արարք»:****

Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ, իր կարեւորությամբ հանդերձ, հիշյալ նախադեպային որոշումն իրավակիրառական պրակտիկան լիարժեք չի կարող ուղղորդել այնպես, որ մեղադրողը, **«Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի հիմքերով՝ դադարանում մեղադրանքը պաշտպանելու իրավասության շրջանակներում, առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դադարական քննությունը հետաձգելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունը դադարանի կողմից բավարարվելու դեպքում, անհրաժեշտ գործողություններ կադարձի այն պայմանով, որ բացառվի ամբասդական դադարական կարգավիճակի որեւէ փոփոխություն եւ նրա շահերի ու**

իրավունքների ցանկացած ոպնահարում, որի գնահարողն ու երաշխավորողը փվյալ գործը քննող դադարանն է: Ներեւաբար, սահմանադրական դադարանը գվնում է, որ վերոնշյալ իրավապայմանների ապահովման դեպքում է հնարավոր դադարնության փուլում երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **ՈՐՈՇԵՑ**:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դադարարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի դրույթները սույն որոշման մեջ սահմանադրական դադարանի կողմից արքահայրված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական դադարարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ